Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1489 — 1494

49.99
S-74

2010

002

1. Schneuwly, Alois-Joh. Schumpfuschen bei Steinen
2. Rudolfen Fridolin Hugo Zeller
3. Schwegler, Joh. Ev. bei Alois-Steinmann
4. Heimbrunner bei Wor Gustav Zumbach
5. Arbogast, Emil Anton
6. Wyrsch, Fr. A. Zurmbach
Benjamin Meier, bei Wo. Wiederkehr

№ 3867.

ՎԱՆԳՈՅԺ

ԿՈՒՑ ՄԻ ՁՈՒՐ

ԻՒՐ

ԸՅՐԸԾ ՀԱՅՐԵՆԵՐԱՅ ՎԷՐԱՅ

ԿԸ ՍՐՍԿԷ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

1877

ՓԵՌՈՒՄԸ

Վ ա ն ա գ ի ա ն

Հայոց Հանրակրթական Ընդհանուր Ընկերության Հրատարակչատեղի Դպրոցի մեջ Ներսիսյան տարբերակով ուսումնական դասագրքերի հրատարակչատեղի տպարանում, և արտիսպեցաւ նորա ծախքը

Ներսիսյան կրթիչ անգամ Հրատարակչի Վանական Դպրոցը, մեր արդարադատ Թեմիս Հոգևոր Հաստատության Դպրոցն է թե, նոր Հանրակրթական դասագրքերի (ծախքը Հանձնելոց դաս) Դասատուներին Ներսիսյան Դպրոցում, Ինչպես Դասատուներ բազմաթիվ, Ինչպես Սրբազան գալիքներում, գին է 20 կոպեկ։ Օտարազգիներին կարող են գին մի Ռուբլի Հանձնել Հանգիստ Հաղորդին։

Тифлисъ. Библіотеку бывшую Иванова Перчу Прошіанцу.

Г. Սարգսյան։

1877

Գին։

Տ ա ս ն ա մ ի ա ն

Ի Տպարանի Ցոմ Հանրակրթության Դպրոցների

1877

Վահագն
891.99-1
1877, Թիֆլիս

ԱՌ ՄԵԾԱՐՈՑ ԱԻՐԵԼԻԴ ԻՄ

ԸՄՊԱՀԱՍ ՍՕԼՍԻԹԵԱՆ

ՄՏԵՐԻՄ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ

Վասն վառուեցաւ, որ իմ և քո բնականունդ Հայրենիքն է. անշուշտ ձեր ազնիւ սիրոն ևս մեր կարեվէր սրտին հետը վշտահար եղած է։

Այդ քաղաքաւոր կրակին համար, որ անխնայ այրեց լափեց մեր Հայրենեաց կեանքը, ևս մի կաթ ջուր պատրաստեցի, չէ թէ այրած ժողովուրդին մոխրեալ սրտին ջուր տալու մտքով՝ զի դորա համար գեաներ և ծովեր պէտք են, այլ միայն Վանայ գպրոցանց աղքատիկ մանուկներուն ծարաւն ու պապակը զովացնելու համար։

Այն իմ արտասուաց մի կաթիլ ջուրը ձեր բարեսիրտ ազնուութեան կը յանձնեմ, որ զայն ձեր օգնական ջանիւք առատացնէք, այսինքն մանուլին տալով հոգայք տպագրութեան պէտքը, որոյ գուշնաքեայ ստիպիւնք նուիրենք հետ քեզ մեր Հայրենեաց այն կարօտ մանուկներուն՝ որք այսօր սնդպրոց, անգիրք և անթուղթ մնացին։ Այս փոքրիկ բարոյական հայի նկատակը մենք մատակարարեմք, զի մեր բաժին է. իսկ հանապազորդական հացն թողումք, թող Աստուած հոգայ, ոչ միայն այս-

յոց՝ այլ և հարցն ու մարց։ Ոչ, հայրերը չ.քաւորութեամբ թշուառացան և այդ անմխիթար դառնութեամբ կը հեծեծեն տան մէջ. գոնէ զաւակներ մխիթարուին դպրոցին տաճարին մէջ։ Եէն քաղաքի մի վաճառականի խանութներ փակուեցան, չիմացուած որ դպրոցներն էլ փակուին, մինչև յիշէ Աստուած և այցելութիւն լինի տառապեալ ժողովրդին։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

25 Յունվար 1877

109247-ԱՀ

ԿՈՒԺ ՄԻ ԶՈՒՐ

ԱՌ ԻՄ ԱՅՐԱԾ ՀԱՅՐԵՆԻՔՔ

Եղ. Եւ որպէս բա յաւերակի:
Սաղմ. ՃԱ. 6։

Ո՞ տայր ինձ, ո՜հ, գեղեցիկդ Վան, Վասպուրական աշխարհի զարդն ու պսակ, որ աւերակիդ ա՛ծխուեցեալ մոխրին վերայ նստելով՝ արժանի լինէի գքեզ և քո որդւ՛քներդ ողբալ, ինչպէս ողբասաս Երեմիան, որ լայր և կոծէր այրիամայրն և գերեվարեալ Երուսաղէմին վերայ։

Որդիքներդ գերի չը գնացին ի Բաբիլոն, այլ նոյն իսկ հայրենեաց երկրին ու գրկին մէջ ապքասութեամբ սրիկացան ու գերեցան. հայ՝ որ նոցա կեանքն էր, խլեցին զայն ու քանդեցին վաճառաշահութեան ագարակն, և այժմ դու համակ որդիքներովդ մնացիր նօթի և նուազեալ։

Ա՛ի լաք, գեղեցիկ մանուկներ, մի՛ կոծէք, կաթնաու մայրեր, թէ հայն ու կաթ պակսեցաւ՝ մեր երկնաւոր Հօր դուռ, որ ճնճղուկներ կը հոգայ՝ զձեզ չի մոռնար. շուտ կանչեցէք ձեր ագոյ իրիկուն ու գիշեր, և առաւօտ ուրախութիւն կարձունէք.

Պատահար քո՝ երկնից պատահար չէր, այլ նոյն իսկ քո երկրէն և քո մէջէն. հին դրացի քաղաքացիներդ գաւեցին զքեզ. նոքա՝ որ քեզ հետ կուռէին հայրենի սեղանէն, նոքա՝ որ քո ճակատին քրտանց վաստակով լիապէս կը յագենային, ահ անխնայաբար ոտնակոխեցին բարեկից հայի սեղանդ։

Այսուհետև զարդիւնս ձեռանց իւրեանց կերիցեն։

Ես գիտեմ, հայ՝ քո զօրութիւն և հոգին էր, և այն իսկ էր միայն որ յառաջադիմութեանդ զօրավէզ կը լինէր և դու կը քայլէիր այնչափ, որչափ մանուկ մի նոր ոտք երած։ Արդեօք տնակից եղբայրներդ նաւատանձեցան, հայն ու վաստակ ձեռքէդ կորզեցին, որպէս զի դու առ քաղցի ուժաթափիս, ոգիդ և ջղերդ թուլնան, ծունկերդ կթոռին, և այլ ևս չկարենաս յառաջադիմել դէպ ի յուսոյն ապարիզ և լաւագոյն կեանք։

Բայց ի՞նչ էր քո գուշնաքեայ յառաջադիմութիւն, ես գիտեմ ու կը ճանաչեմ զքեզ. որդիքներուդ կէս մասն պանդխտութեան մէջ մաշելով կը մաշին, կէս մասն ևս այդր բիւր զրկանօք հանդերձ հազիւ կը հայթայթեն իւրեանց ապրուստն ու պարէն. միթէ առ այդ ևս մախացաւ երիցագոյն եղբայրդ և հին ու մոլար քաղաքականութեան դատաստանով վնասակար համարեց։

Եթէ այդպէս, ախտա՜, նա քան զքեզ առաւել աւժեց ու հիրցաւ խորհրդով խելամտել, որ քո կարծեցեալ յառաջադիմութիւնդ երկրին ընդհանուր բարգաւաճման անխորտակ շահ և օգտակար էր։

Եթէ յիրաւի և իրապէս յառաջդիմութեանդ քայլերդ հաստատուն և զօրաւոր էին, այդ իսկ մեծ շահ էր անշարժ և անաշխատ եղբօրդ. զի դու պոյն ևս մղելով մղելով յառաջ

կը տանէիր հետ քեզ, և իրրև երկու լծակից ամրներ հաստատ վաստակիլով, հաւատար ըժնելով հայրենեաց ազատակին արդիւնքը, այնուհետև հաւատար կը վայելէիք ի փառս Օսմանեան Կայսրութեան։

Ո՞վ տիրատէր և ժրաջան Հայ մշակներ, հայրենեաց ազատակին մէջ այն ինչ միամտութեամբ կաշխատէիք բեղմնաւոր հունձերով երկիրը բարեշէն պահել և տիրոջ շահերը գանձով ու ցորենով լեցնել, ամոխրատէր ծառայակիցներ հրձիգ աբարին ազատակն, խնայեցէք եղէն ու շմտաբերեցէն, թէ այդ ոճիրն ազգուն գանձուն և բոլոր հայրենակից ժողովրդոց հաւատար զեան է։

Ո՛վ չի գիտեր, որ երկրի մը բռնութենէն և զրկանքէն միայն կը զրկուի բնակիչ ժողովուրդ, և կը թշուառանան առ հասարակ ազգը և տուապանաց մէջ Զուրանի և Աւետարանի որդիքներն՝ երկու դան ի միասին գլուխ նատին ու լան, մէկ դան արևուն տակ և միւսն գիշերուվար լուանին, հոց հոց ազաղակեն։

Արիթէ նա որ յաւիտեանց ընկերին հաց, նա կրնայ պատ ուտել։ Ո՛չ, ոչ. զրկանաց ու յաւիտենութեան հաց առաւօտէն մինչև իրիկուն չի տեսեր, շուտով կրտատի. զի այն հացն է միայն արդար ու անարատ՝ որ մարդոց ճակատին քրտանց արդար վաստակն է. ով որ առանց այս պայմանին հաց կուտէ աշխարհիս վրայ՝ պետական Աստուծոյն վճիռը կեղծանէ։

Զրկիտեմք քո մեղքն ի՞նչ էր, ով անզէն և հրա հնազանդ ժողովուրդ Վանայ, զոր ոչ զէնք ունէիր և ոչ երբէք ընդդատացար տիրոջ գաւազանին դէմ. քո հաւատարմութեան չափ հինգ հարիւր տարի է, և քո զէնք միայն խոմն ու արօր,

արուեստ և վաճառականութիւն քո զբաղումն էր. և միթէ մոյս եղև հաստատումն քո հաւատարիմ հպատակութեան։

Ի՞նչ խորհրդաւոր օր էր հրափոքձութեանդ օր, ո՜վ անբախտ Վան. միթէ այն օր քեզ համար սև ծր էր, երբ Թուրքաստանի պայծառ օր կսկէր, երբ Բիւզանդիոնի Վոսփորէն հրանօթներ կոլոտային, և Օսմանեան միապետ ինքնակալ Կայսր սահմանադրութիւն կը կնքէր. այն ուրախ օրերում, ո՜հ, մոլեգնութեան հուրն զքեզ լափեց, ծուխով ու մոխրով խեղդեց քո խնդութեան ձայն և շունչ։

Մինչդեռ մայրաքաղաքն իւր համայն գաւառներով հրավառութեան ոճն կը կատարէր, դու հէք ապերջանիկ Վա՛ն, քո ոճն հրավառութիւն չէր, այլ ծախիչ ու համաձարակ կրակ մի, որ մի գիշերուան մէջ սպառեց զքեզ. այսր Բիւզանդիոնին մէջ պանդուխտ զաւակներդ երգոց ու նուագարանաց ձայներով կը պարէին, իսկ այդր բոցերուդ ձարձատիւն միայն կը լսուէր, ուրից հետ կը խառնուէր նաև թշուառ որդիքներուդ ողբ, կոծ, լացն ու աղաղակ։

Ոչինչ քեզ մնա էր, ջրոց աղբիւրներ և վտակներ կը վազէին. կարաձմեռն էր, թանձր ձիւնի ճերմակ սաւանով պատած էիր, շէնքերդ ամէն հողակառոյց էին, մարդ կը զարմանայ, թէ որպիսի՞ դիւրութեամբ վառեց զքեզ կրակ։

Այդ մի հրաշք է աշխարհի առաջ. ճիրտ հուրն զհող վառեց, ո՞վ լսեց ու տեսաւ որ Վանայ շէնքերն հրդեհէն վառին. թէ գիտէք՝ դուք պատմեցէք մեզ, ո՞ հարիւրամեայ ծերունիք, դուք դեռ ողջ է՛ք և կապրիք այսօր, վկայեցէք երկրիս դատաւորաց առաջ։

Թուրքաստանի վերանորոգ սահմանադրութեան ոճնին անշուշտ զոհ մի պէտք էր, և այն փառաւոր զոհ դու մատուցիր,

ժողովուրդ Հայոց. բայց զիրացիր, թէ կանխաւ քան զքեզ շատ զոհեր զոհուեցան այլ և այլ ժողովրդոց և պատերազմի դաշտերուն մէջ։

Եթէ այլքն այնպէս դառեն, որ քո զոհն անարիւն և դուզնաքեայ էր սակայն ես կասեմ քո զոհն արիւն և կեանք կազմող զօրութիւնն էր. ո՜հ, նշարակով բոլոր մարմնոյդ երակները բացին, թոյլ տուին որ դու այնուհետև սակաւ սակաւ մեռանիս չարաշուք ազգութեան մէջ. և քո երակահատներ չքմեղս լինելով՝ աշխարհի առաջ ձեռքերնին լուանան և ասեն. «Գաւեալ եմք մեք յարենէ զորա։»

Ողորմի՜մ քեզ, ժողովո՜ւրդ Հայոց, ողորմի՜մ. ապրելոք լաւագոյն չէր քեզ, որ միանգամ մեռնէիր և կնքուէր քո հանգլուտեան գերեզման և դու երթայիր դադարէիր առ Հարս քո, քան թէ այսպէս ի գետին թալկանալով արիւնացամաք մեռնիս։ Ո՜հ, մինչև երբ անամ քեզ, որ ինքնազոհ մեռնիլ սորվիս. աշխարհ սորվեցաւ այդ դասը, իւր մրցանակն առաւ. դու դեռ անուս մանուկ մնացիր։

Դո բախտն և քո յատկական առաքինութիւն այդպէս է, որ դու այդ օրինակ մեռնիս. ուրեմն փառք տուր երկնից ու մխիթարուիր. դու ևս եղիր այն զրկեալ արդարոյն պէս աւերակիդ աղբիւրին վերայ նստիր. ոչինչ տրտունջ կամ բարկութեան բան մի՛ խօսիր երկնից դէմ. տա՛ա, «Կամք Տեառն օրհնեալ եղիցի, Տէր ետ և Տէր էառ»։ Հանդուրժէ հարուածներուդ, թող այդ ևս քո անցեալ բիւրաւոր զոհերուդ հետ խառնուի։

Գիտեմ, մխիթարութիւն և սիրտդ գտնուցեալ սրտիդ խոցերն ու վէրքերը չեն բուժեր, զի խիստ անօրինակ և դժնդակ դէպք էր, որ քեզ դիպեցաւ այս ժամանակին մէջ, զոր քաղաքակրթութեան դար կը կոչենք, և այն յուսալից օրերը,

երբ Օսմանեան կայսրութեան նոր թուականն կսկսէր և երկրին շինութեան հիմն կը դրուէր, ահա, այն օրերը դու քանդուեցար։

Այո՛. այն օրերը, երբ սահմանադիր օրէնք պարտք և իրաւունք կը քարոզէր, հաւասարութիւն կաւետէր, քո զրկանք և հարստահարութիւն ապրիլ ևս ծանրացար. երբ այլ և այլ կրօնի տարանջատ որդիքներն ձեռք ձեռքի տալով միացման դաշնակցութիւն և ուխտ կը կնքուէր մայրաքաղաքին մէջ. Վանտոսպ ըմբոստացաւ յանկարծ, խզեց այս նոր դաշնակցութեան կապը, երիցագոյն եղբայր կրտսերին վերոյ յառնելով կապանէր զայն։

Մինթէ նա հին սրտմտութիւն ունէր սրտին մէջ, որ մոռցաւ ժամանակին վերահաս տարնապն, չարար պատիւ խորհրդական ծերերուն՝ որ կայսերական քաղաքին խորհրդարանին մէջ գիշեր ու ցորեկ երկրին խաղաղութեան համար կը հոգային, կը խորհէին հնարից ելք մի գտնելը և ազատել երկիրը իւր վերահաս վտանգէն։

Ո՛վ Գուրա՜ն Գուրա՜ն, ես չեմ հաւատար այնպէս ինչպէս կը հաւատան ոմանք, քո զգիրներէն, թէ դու քիչ հաւատացող որդիքներուն՝ տիրապէս հրաման կուտաս, որ Ալեսարանի ազգաս որդիքներուն ձեռքէն հացը յափշտակեն, ասրուկ ծանչնան, կեանքէն զրկեն. եթէ մեռցնեն՝ այդ ևս գոհ և արդարութիւն համարին. միով բանիւ միշտ բռնաւորութեան գաւազանով ջախջախեն զերիներ։

Ես չգիտեմ թէ ջախջախելով ջախջախելով ի՞նչ շահեցան քո որդիքները։ Այդ հաշիւը ոնուաս կայսրութիւն և մեզ յայտնի է այսօր, որ Թուրքաստանի ժողովուրդ ամէն կրօնի ազգերը առ հաւասարակ ջախջախուեցան քաղաքակրթութեան առաջ. սուտ է թէ ասեմ՝ օտարին ձեռք զմեզ ջախջախեց։ Ո՛չ

ոչ մեք զմեզ անգիտաբար ջախջախեցինք և արդ փշուր փշուր եղանք։

Քա՛ռ թէ թշնամագիր ոգւով կը գրեմ և կը խօսիմ. ես Թուրքաստանի աշխարհին մի Հայ զաւակն եմ, և ի մանկութենէ ամէն երկրին յառաջդիմութեան միշտ սիրահար. հաւատարմութեան կնիք միշտ անեղծ պահեր եմ ճակատս վերայ. և առ այս վկայ կը կոչեմ հազար ութ հարիւր վաթսուն և երկու թուականը. յորում Կովկասի լերանց վերայ քո փառք և քո ներոլամիտ մեծանձնութիւն կը հրատարակէիր։

Հինգ ամբողջ դար է, որ Հայն հետ քեզ կապրի և երկրիս արդիւնաբեր մշակութեան համար քո հաւատարիմ և ըծառայ եղն է. դու տեսա՞ր երբէք, որ Հայն ընդվզեցաւ իւր կենաց մէջ, կամ եղջիւր ածեց կարծրակուռ խարազանիդ դէմ, որով դու նորա թիկանց կաշին հարուածելով հարուածելով շերտ շերտ հանիր. տակաւին Հայն միշտ անմռունչ մնաց քո առաջ, քո լուծը միամտութեամբ կրեց և ոչ մի անգամ մտաբերեց որ թօթափէ իւր պարանոցէն, զի հետ քեզ հաւատարմութիւն ուխտեր է։

Սախատեա՛ք, նախատեա՛ք, ով Թուրքաստան. տուն ու դանակ քաղաքակրթութեան պատնէշն մէջ դիր, դիտցիր՝ եթէ ջանաս միշտ քո վատակաւոր եղն իւր վարած ակօսին մէջ մորթել՝ ի՞նչ կը լինի այնուհետև քո շահն—ոչինչ, միայն միան ու կաշին. և յայնժամ դու անադան ուրեմն կուշաբերիս. և ա՜մա՛ռ, կը տեսնաս որ երկիրդ անմշակ մնացեր է, հացին ու դանձին տակը կը տիրէ, երկրին զաւակներ քաղցած կը մնան։ Ծանիր, ուրեմն ծանիր այդ ժրագործ եղին շահաբեր արդիւնքը, փոխանակ ազազուն պահելոյ՝ դարման ա՛ր ու պարարտ պահէ զայն, որ իւր ուժով կարենայ վարել քո խորդացեալ երկիրը։

Ո՛վ սուրբ հաստատութիւն, ո՛վ պայծառ սաղմ, որ կը փայլիս Հայու ճակատին վրայ. չգիտեմ, քո պայմանն, քո չափն և քո սահմանն մինչև ո՞ւր է, և Հայն իւր հաստատութեան վարձն ու պակը ինքը պիտի ընդունի։ Եթէ այսպէս դու անվարձ անպակ մնաս և մերթ ևս փոխանակ վարձուցդ ծանր ծանր հարուածներս, ուրեմն այդ քո առաքինութիւն ի զուր և ընդունայն է աշխարհիս առաջ։

Դու գիտես, ով հաստատիմ ժողովուրդ Հայոց, մարդիկ և ազգեր կան, որ քո այնչափ հաստատութիւնդ կը ծաղրեն ու կը մեղադրեն զքեզ. երբ կը տեսնան որ խիստ անմունչ և անզգայ կը լինիս հաստատութեանդ մէջ, մինչև անշունչ անբարբառ գիակ մի կը դառնաս դու, այնպէս որ պարկեշտութիւնդ կը նշանակեն և կոխկռտելով կանցնին մերայէդ, և դու չես խմանար։ Մթէ զանհայ կա՞ն ես դու աշխարհիս երես. ես էլ կը դառնամ զքեզ, թէ այդչափ սարկաւոս և ազարտես մարդկութեան ազատ պատիս։

Սակայն դուք մի՛ վհատիք, Աստուածեալ որդիքներ. յոյս առ ու քաջալերուէ, ժողովուրդ Հայոց, երկհազար ամ է, որ միշտ կը ջախջախուիս ու չես մեռներ. Պարսիկ, Յոյն, Արաբացին և Մոլկասեան բարբարոս ազգերը միշտ արշաւեցին ու քանդեցին քս հայրենիք. բայց դու անմիտնդ՝ անյուսահատ տակացող ոգի մի ունիս, որով կապրիս ու կը մնաս մինչև յաւիտ։

«Հաւատ քո կենդանի զքեզ,» ասաց Քրիստոս. ուրեմն հաւատա, որ երկնից Նախախնամութիւն արդար և բարերար է. քո սերմն ու արմատ պիտի պահէ այդ բնիկ հողին մէջ, որ քո հայրենատուր ժառանգութիւն է. ընդունայն կը ճգնին այն ձեռք, որ կաշխատին զքեզ արմատախիլ առնել։

Եղէք ուրեմն, մի՛ նայեք և յուսահատ ոչոք այդ ապաժոյժ աւերակաց վերայ, եղէք, Վանեցիք, թաղեցէք այդ մեռելը, վրան կոթող մի կանգնեցէք ու գրեցէք այս յիշատակարանը. «ԱՍՏ ԹԱՂԵՑԱՒ ՎԱՆԵՑԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴՈՅ ԳԱՆՁՆ ՈՒ ԿԵԱՆՔ»

Այդ անցարքը մեռելն ոչոյ հանդէպ կատարելէն յետոյ, եղէք գարձեալ, առէք բահն ու բրիչ, հորեցէք, պեղեցէք ձեր աւերակները, գուք ձեզ համար ճարտարապետ եղէք, հիմը դրէք և շինեցէք ձեր աւերեալ տունն ու քաղաքը. անցեալն էանց՝ այլ ևս չի գառնար. ձեր գառն և խրատուն թէ մնացեան աշխարհիս գատաւորներ, թողէք յայնժամ թող Աստուած տեսանայ:

Ո՞ւմ կայ և ո՞ւմ կը ապաւէք այժմիկ, ձեր արտասուահոս աչքը դէպ յերկինս գարձուցէք. «Օգնութիւն ձեզ ի Տեառնէ, եկեցէ»: Հայոց աշխարհի աւերակները շատ են, խրաքանչիւր գաւառացին, քաղաքացին և գիւղացին թող իւր աւերակները շինէ, և գուք զձերն:

Գիտեմ չգտաւրեցար ձեր ձեռք, ո՜հ, զոր այժմ կարկառելով այսր միայն հաց կը խնդրէք. գիտեմ, թէ, քանի՞ զըժուարին է կրկին կանգնել ձեր վաճառաշահութեան շէնքեր և նոր գրամագլուխ հաստատել. զոր երեսուն, յիսուն տարուան միջոց հազիւ ուրեմն հաստատած էիք:

Ձեզ ասեմ, ձեզ ասեմ, Վասպուրականի երկրի գիւղական ժողովուրդք, ձեզ յորդոր կարդամ, ձեր տաքինութեան ժամն է ահաւասիկ. Վան քաղաք ձեր նեղութեան ապաստանարան էր. գուք ամեն անձկութեան մէջ քաղաքացւոց կը դիմէիք, իսկ այժմ նոքա ձեզ կը դիմեն, զի աշխարհիս շրջանն այսպէս կը դառնայ: Տուէք ուրեմն ինչ որ ունիք. փոխարինեցէք սիրով

մինչև կազդուրվի քաղաքացուոյն ուժը, զիարդ՝ ձեր թեև ու թիկունք քաղաքացին է. Հասէք յօդնութիւն, որ ձեր կենդանի ուժը զօրանայ դարձեալ և խաղաղ չը ջլատի։

Իսկ դուք, անկեալ քաղաքացիք, դուք առաւել զէնք և ձեռն ասք միմեանց, որ ի միասին յոտին կանգնիք. ահաւասիկ է, ձեր առաքինութեան ժամ, ընկերասիրութեան ժամ, Քրիստոնէական եղբայրասիրութեան ժամ, անձնանուէր բարեկամութեան ժամ, միտան հոգւով ու շնչով գործելոյ ժամ, ճշմարտութիւնը բարձրաբարբառ խօսելոյ ժամ. խօսեցէք, վկայեցէք, մի՛ երկնչիք, խօսեցէք ու հաւատացէք որ ճշմարտութիւն պիտի ազատէ զձեզ։

Սիանգամ ելնք ու մոռք այդ խաչակրութեան ապարէզը. դուք քրիստոնէութեան արժանաւոր զրդիքներ կը լինիք, թէ, անտարանջ ոչով ասնիք այդ խաչերը. կարդացէք պատմութիւն, յիշեցէք ձեր անմահ առաքինի նախնիքն ու պապերը, որոց զլխէն այդ անց քերը շատ անցան արիւնով ու մահով հանդերձ։

Թէ յիրաւի՛ ձեր արիական նախնեաց նմանող հարազատ զրդիքներն է.ք, այս հրոյ ու սրոյ ժամանակին մէջ ցուցէ.ք ձեր առաքինութեան հանդէսը, զօրացէ.ք ու զօրացուցէ.ք վհատած ոգիները, նիրան մի՛ լինիք փորձութեան առաջ՝ զի մարդոյն կենաց ճանապարհ այս աշխարհիս վերայ լի է զժնդակ փուշերով։ Առաքինիք միայն զայն կոխելով կանցնին, իսկ վատասիրտներ կը լքանին։

Կոխեցէ.ք և անցէ.ք, ով աշխատասէր եղբարք, մի՛ թափառիք ու հեռանաք ձեր աւերակ ապարանքէն, եկէ.ք զարձեալ զոյգ զոյգ լծուեցէ.ք. ձեր սամոտիք պինդ կապեցէ.ք ընկերական սիրով, հնձելով՝ փնջելով վարեցէ.ք ու պատեցէ.ք այդ տատա-

ոգեաց ակօն, մշակներ, գոգնոց կապեցէք, լի յուսով ցանեցէք ձեր վաստակաւէր քրտանց սերմն, սրտի մի և ապառեցէք, զի ձմեռ է, ձիւն և սառնամանիք ծածկեր են մեր աշխարհ։

Գարուն մօտ է, Հայոց աշխարհ, և պիտի դայ ծիծեռնակ քեզ ասելու թայ, թէ Թուրքիոյ աշխարհին երկունք կանցնի և իւր վերածնութեան օրը հասած է, և դու տես յայնժամ թէ ինչպէս այդ մոխրակոյտ ոգարակն անդրէն բոլբոջելով կը կոնաչի, և քո վերջին բարգաւաճ կը լինի քան զառաջին։

Դու լոյս և արև կը սիրես, ժողովուրդ. լոյս և արև զքեզ պիտի վերածնին, քո հրայրեաց երկիր մարգագետին կը դառնայ. լուսին ի վերուստ վերայէդ անցնելով պիտի զարմացնիմ Հայն, երբ տեսնայ, որ Արծրունեան աշխարհի ոգիքներ հանկ արծուապէս նորափեսաւր զարդարուած են, զոր բռնութիւն փեսաց որ լերկամարմին անպատանք մեռնին։

Կերպասն և չուխայն և պէսպէս Եւրոպոյ զարդեր հանին քեզմէ, ժողովուրդ, մի շուարիր թէ դու մերկ անպատրաստաբար պիտի մնաս. այդ քեզ թող մի բարի խրատ լինի. խելաբերէ այսուհետև, կեանքիդ անտեսութեան գասերդ լաւ սորվիր. վաղուց մոռցած էիր, բարակամանն կուաւներ կը հագնէիր, յիշէ այժմիկ քո հատ կուաւն ու խամաքին։

Եա՛ւ արա, շուտ արա, հին կաւաւագործութեան հոգեզգ բաց. Հայոց ալիկնայք, ճախարակ մանեցէք, թել հատուցէք, և դուք այրեր, կաւ գործեցէք. կարմիր կապոյտ ներկեցէք. վաշ, ինչ վայելուչ է, եթէ դուք ձեր աշխատութեան պարզ ձեռագործներ հագնիք որ շատ տոկուն է և շահաբեր, և միանգամայն կը ջնռուցանէ ձեր բաց կուրծքեր և քրտնած թիկունք։

Տէր ապատէն մեր, զքեզ կը յիշեմք միայն մեր Հեղութեան մէջ, դու ես միակ անկեալ ժողովրդաց խնամակալ հայր.

ի՞նչ է մահկանացու մարդոյն գրիչ և լեզուն, որ կարենայ միխիթարել քո վշտահար ժողովուրդ. և ի՞նչ է մարդոյն ապիկար ձեռք, որ կարենայ բառնալ հարատահարեալ զաւակներուդ բազմապատիկ աղէտները։ Բարձ, Տէր, բարձ, այլ ևս բաւական է քեզ՝ հաւատացեալ ժողովուրդին տառապանք և Հայկայ տուն աւերումն, վերաշինէ մեր քանդուած աշխարհ և մեր փլած տունը. եթէ դու չը շինես՝ ի՞նանիր վաստակին շինողներ։

Տէր բարձրեալ և ահարկու, դու կը հայիս և կը տեսնես Երկնից զեռական սիծուէդ, որ երբ ստրկացած ազգեր կուլան քո առաջ, ինչպէս կուլայ կարօտ մանուկ իւր ծնողաց առաջ, աշխարհիս ազատ և հզօրացեալ ազգեր կայսրանեն, ծաղր ու կատակ կառնեն զմեզ. երբ մեք մեր զրկանաց դառնասուն և խրատունք միշտ քեզ կը թողումք գիտնալով որ անօգնական ազգին՝ միակ ապաւէն և զօրութիւն դու ես։

Աստուա՜ծ մարդասէր, մեր գթած Սամարացին դու ես, մարդոց այս անխնայ դառնասուն զմեզ ապատէ. որք Երիքովի ճանապարհի վերայ ընկած վիրաւորը կը տեսնան, և գիտեն իսկ, որ նա ինքնին անյարիր է, դարձեալ զանց կառնեն. մին կասէ, ի՞նչ շահ ունիմ ես որ ձէթ և գինի ածելով վէրքերդ պատեմ, և միւսն՝ թէ ի՞նչ վարձ կուտաս, որ զ.քեզ բառնամ տանիմ մինչև ապատավայր պանդոկ, ուր դարման տանելով քեզ՝ ողջնաս և նոր կեանք ստանաս աշխարհիս վերայ։

Այսպէս անկարեկիր են մարդիկ, ո՜վ Տէր, առանց պայմանի մեր վէրքերուն դեղ և դարման չեն գներ, և առանց փրկանաց գին խնդրելոյ զմեզ չեն փրկեր. սորա համար Դաւիթ իւր ժողովուրդին խրատ կուտար. «Մի յուսայք յիշխանս՝ յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա։»

Ես կը լամ, Տէր, թող այրած ժողովուրդին հեծեծանքն միայն առ քեզ հասնի. բայց ի՞նչպէս լամ. թէ լամ ես, Վատրուրականի քարեր կաղապակեն, երկու բիւր ժողովրդոց աչք վկայ են այս ճշգրիտ իրողութեան. թէ աշխարհիս իշխանութեան դատաւորներ այս վկայութիւն չընդունին, այնուհետև դատ և դատաստան քեզ կը մնայ, ո՜վ իրաւարար Տէր։

Մամո՜ւլ, մամո՜ւլ, որ քան զարծիւ արագաթև ես, առ և տար մորմոքող սրտիս ցաւն ու հառաչանք և աչքիս ապէջուր կաթիլները, տար, ցողէ այն իմ այրած Հայրենեաց փոշիացեալ աւերակներուն վերայ, ցողէ վառուած ու մրկած սև սիրտերուն վերայ։

Գիտեմ, գիտեմ, այս իմ հեռաւոր նժդեհութեան վայրէս զքեզ լալ միայն հերիք չէ, ո՛վ իմ բնակամուղ Հայրենիք, ո՛վ իմ խանձեալ խանձարուր. դա՜մ դա՜մ և քեզ հետ կակաչ բառնամ, մոխրակուտիդ վերայ ողբամուէր նաստլով զքեզ ողջագուրելով լամ։

Дозволено цензурою. Тифлисъ, 29 Апрѣля 1877 г

Типографія Мартиросіанца на Орбеліановской улицѣ, д. №. 5

2013

1489-1494

<< Ազգային գրադարան
NL0060931

<< Ազգային գրադարան
NL0060930

<< Ազգային գրադարան
NL0060929

<< Ազգային գրադարան
NL0060928

<< Ազգային գրադարան
NL0060927

<< Ազգային գրադարան
NL0060926